# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան համայնք
Գ.Խանջյան, Հեռ. 093667577, Khanjyan.armavir@mta.gov.am

*N 01-128*
04.10. 2019թ.

*ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ*
*ՄԱՐԶՊԵՏ*
*ՊԱՐՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ*

*ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ*

*Ի լրումն Խանջյան համայնքի ղեկավարի 10.01.2019թ. N 01-126 գրության, Ձեզ է ներկայացվում համայնքի ավագանու 24.09.2019թ. կայացած N 4 արտահերթ նիստի N 16, 17-Ն, 18, 20 և 22 որոշումների օրենսդրությանը համապատասխանեցված օրինակները:*

*Առդիր 15 էջ:*

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ԱՐՈՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ա-1754 1-2019թ.
07 10 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ՆԻՍՏԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 16

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին"Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 17-րդ հոդվածով.*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. *Հաստատել Խանջյան համայնքի ավագանու N 4 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:*

| *Ավագանու անդամներ* | *կողմ (ստ.)* | *դեմ (ստ.)* | *ձեռնպահ (ստ.)* |
|---|---|---|---|
| 1. Ավետիք Արոյան | | | |
| 2. Աբրահամ Գենջոյան | | | |
| 3. Արմեն Եղիազարյան | | | |
| 4. Կամո Թովմասյան | | | |
| 5. Հովհաննես Խաչատրյան | | | |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ԱՐՈՅԱՆ*

*Հավելված*
*Խանջյան համայնքի 24.09.2019թվականին կայացած*
*ավագանու N 4 նիստի N 16 որոշման*

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1)Նիստի օրակարգը հաստատելու մասին:

Զեկուցող ___ Մ. Զաքարյան:

2) <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խանջյան համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին>>:

Զեկուցող ___ Ա. Մանգուշյան:

3)Դրամական օգնության հատկացման մասին:

Զեկուցող ___ Ա. Արոյան:

4) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի բաց աճուրդային կարգով օտարելու մասին:

Զեկուցող ___ Ա. Արոյան:

5) 04-049-0154-0001 ծածկագրի 0.90 հա հողատարածքի սեփականության իրավունքի վերահաստատման մասին:

Զեկուցող ___ Ա. Արոյան:

6) Հասարարակական նշանակության և գյուղատնտեսական այլ նշանակության հողերի կատեգորիայի փոփոխության մասին:

Զեկուցող ___ Ա. Արոյան:

7) 2020թվականի համար Խանջյան համայնքի տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերի սահմանման մասին:

Զեկուցող ___ Ա. Արոյան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ՆԻՍՏԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 17-Ն

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին"Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, "Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով.*

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2019 թվականի բյուջեում կատարել փոփոխություններ

1)01 բաժին -1 խումբ -1 դասի 4221 հոդվածը նվազեցնել 34.0 հազար դրամով:

2) 01 բաժին -1 խումբ -1 դասի 4212 հոդվածը ավելացնել 300.0 հազար դրամով:

3) 01 բաժին -1 խումբ -1 դասի 4234 հոդվածը ավելացնել 34.0 հազար դրամով:

4) 01 բաժին -1 խումբ -1 դասի 4269 հոդվածը ավելացնել 300.0 հազար դրամով:

5) 01 բաժին -1 խումբ -1 դասի 5113 հոդվածը ավելացնել 200.0 հազար դրամով:

6) 01 բաժին -1 խումբ -1 դասի 5122 հոդվածը ավելացնել 60.0 հազար դրամով:

7) 04 բաժին -2 խումբ -4 դասի 4251 հոդվածը ավելացնել 200.0 հազար դրամով:

8) 04 բաժին -5 խումբ -1 դասի 4251 հոդվածը ավելացնել 1000.0 հազար դրամով:

9) 06 բաժին - 4 խումբ -1 դասի 5113 հոդվածը նվազեցնել 260.0 հազար դրամով:

10) 08 բաժին - 2 խումբ -3 դասի 4213 հոդվածը նվազեցնել 500.0 հազար դրամով:

11) 08 բաժին - 2 խումբ -3 դասի 4269 հոդվածը նվազեցնել 900.0 հազար դրամով:

12) 08 բաժին - 2 խումբ -3 դասի 4252 հոդվածը ավելացնել 500.0 հազար դրամով:

13) 08 բաժին - 2 խումբ -3 դասի 4251 հոդվածը ավելացնել 600.0 հազար դրամով:

14) 08 բաժին - 2 խումբ -4 դասի 4239 հոդվածը ավելացնել 360.0 հազար դրամով:

15) 10 բաժին - 7 խումբ -1 դասի 4819 հոդվածը նվազեցնել 500.0 հազար դրամով:

16) 10 բաժին - 7 խումբ -1 դասի 4729 հոդվածը նվազեցնել 845.4 հազար դրամով:

17) 11 բաժին - 1 խումբ -2 դասի 4891 հոդվածը նվազեցնել 2314.6 հազար դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն հաջորդող տասներորդ օրը:

| *Ավագանու անդամներ* | *կողմ (ստ.)* | *դեմ (ստ.)* | *ձեռնպահ (ստ.)* |
|---|---|---|---|
| 1. Ավետիք Արոյան | | – | – |
| 2. Աբրահամ Գենջոյան | | – | – |
| 3. Արմեն Եղիազարյան | | – | – |
| 4. Կամո Թովմասյան | | – | – |
| 5. Հովհաննես Խաչատրյան | | – | – |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ԱՐՈՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ՆԻՍՏԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 18

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին"Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. *Թույլատրել սոց. Օգնության գումարներից հատկացնել 300 000 դրամ սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:*

| *Ավագանու անդամներ* | *կողմ (ստ.)* | *դեմ (ստ.)* | *ձեռնպահ (ստ.)* |
|---|---|---|---|
| 1. Ավետիք Արոյան | | | |
| 2. Աբրահամ Գենջոյան | | | |
| 3. Արմեն Եղիազարյան | | | |
| 4. Կամո Թովմասյան | | | |
| 5. Հովհաննես Խաչատրյան | | | |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ԱՐՈՅԱՆ*

*Հավելված*
*Խանջյան համայնքի 24.09.2019թվականի կայացած*
*ավագանու N 4 նիստի N 18 որոշման*

# ՑՈՒՑԱԿ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1)Սոնյա Ջիաթի Մարգարյան — 50 000 դրամ

2) Ժաննետա Գևորգի Մնացականյան — 100 000դրամ:

3)Գայանե Տիգրանի Գրիգորյան — 50 000 դրամ:

4)Դավիթ Վաղարշի Հակոբյան — 50 000 դրամ:

5)Արթուր Վլադիմիրի Գևորգյան — 50 000 դրամ:

ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՐՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 19

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ԲԱՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին"Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. *Բաց աճուրդային վաճառքով օտարել 04-049-130 տարածքի գյուղատնտեսական նշանակության վարելահողերից 0.3957 հա 1 լոտով.մեկնարկային գին սահմանել 437.250 դրամ, որը ՈՒ. Կ. Շ. Գոտու 2-րդ կարգի վարելահող է:*
2. *Աճուրդը կայացնել 2019թվականի նոյեմբերի 5-ին ժամը $12^{00}$: Կանխավճարի չափը և քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով, մուտքի վճար սահմանել 2000դրամ:*
3. *Հանձնարարել համայնքի ղեկավարին սահմանված ժամկետներում իրականացնել համապատասխան գործառույթները:*
4. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն հաջորդող տասներորդ օրը:*

| *Ավագանու անդամներ* | *կողմ (ստ.)* | *դեմ (ստ.)* | *ձեռնպահ (ստ.)* |
|---|---|---|---|
| 1. Ավետիք Արոյան | | | |
| 2. Աբրահամ Գենջոյան | | | |
| 3. Արմեն Եղիազարյան | | | |
| 4. Կամո Թովմասյան | | | |
| 5. Հովհաննես Խաչատրյան | | | |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ԱՐՈՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ՆԻՍՏԻ

---

24.09.2019թ. ՈՐՈՇՈՒՄ N 20 գ.Խանջյան

## 04-049-0154-0001 ԾԱԾԿԱԳՐԻ 0.90 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին"Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի համապատասխան դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. *Վերահաստատել ՀՀ քաղաքացիներ Սարգիս Դավթի Փոլադյանի (ծնված 19.07.1948թ.), Զարուհի Վարուժանի Քալանթարյանի (ծնված 21.02.1958թ.), Էդգար Սարգսի Փոլադյանի (ծնված 25.10.1987թ.), Արշակ Սարգսի Փոլադյանի (ծնված 05.09.1989թ.), սեփականության իրավունքը ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան համայնքի 04-049-0154-0001 ծածկագրի 0.90 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 02.02.1991թվականի N 1 որոշումը:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:*

| *Ավագանու անդամներ* | *կողմ (ստ.)* | *դեմ (ստ.)* | *ձեռնպահ (ստ.)* |
|---|---|---|---|
| 1. Ավետիք Արոյան | [signature] | | |
| 2. Աբրահամ Գենջոյան | [signature] | | |
| 3. Արմեն Եղիազարյան | [signature] | | |
| 4. Կամո Թովմասյան | [signature] | | |
| 5. Հովհաննես Խաչատրյան | [signature] | | |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ԱՐՈՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ՆԻՍՏԻ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 21

## ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. *Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ նշանակության 04-049-001 ծածկագրի տարածքից 0.361 հա փոխադրելու բնակավայրի բնակելի գործառնական նշանակության՝ միջգերատեսչական հանձնաժողովին դիմելու և դրական եզրակացություն ստանալուց հետո:*
2. *Տալ համաձայնություն բնակավայրի ընդհանուր օգտագործման համայնքային սեփականություն հանդիսացող 04-049-029 ծածկագրի տարածքից՝ հասցե 5 փ. 4 տարածք 0.006 հա փոխադրելու հասարակական կառուցապատման գործառնական նշանակության միջգերատեսչական հանձնաժողովին դիմելու և դրական եզրակացություն ստանալուց հետո:*
3. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:*

| *Ավագանու անդամներ* | *կողմ (ստ.)* | *դեմ (ստ.)* | *ձեռնպահ (ստ.)* |
|---|---|---|---|
| 1. Ավետիք Արոյան | [signature] | ________ | ________ |
| 2. Աբրահամ Գենջոյան | [signature] | ________ | ________ |
| 3. Արմեն Եղիազարյան | [signature] | ________ | ________ |
| 4. Կամո Թովմասյան | [signature] | ________ | ________ |
| 5. Հովհաննես Խաչատրյան | [signature] | ________ | ________ |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* [signature] *Ա. ԱՐՈՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽԱՆՋՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 4 ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 22

## ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին"Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. *Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Խանջյան համայնքի տեղական տուրքերի և վճարների 2020 թվականի դրույքաչափերը համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանն հաջորդող տասներորդ օրը:*

| *Ավագանու անդամներ* | *կողմ (ստ.)* | *դեմ (ստ.)* | *ձեռնպահ (ստ.)* |
|---|---|---|---|
| 1. Ավետիք Արոյան | | | |
| 2. Աբրահամ Գենջոյան | | | |
| 3. Արմեն Եղիազարյան | | | |
| 4. Կամո Թովմասյան | | | |
| 5. Հովհաննես Խաչատրյան | | | |

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ԱՐՈՅԱՆ*

ՀԱՎԵԼՎԱԾ
ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
24 ՄԵԴՏԵՄԲԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԿԱՅԱՑԱԾ N 4 ՆԻՍՏԻ N 22-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1) Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

__ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

__ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

__1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

__3001-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

__ Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

__ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ:

2)Գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով՝

ա. Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ պատշգամբ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

բ. Բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5)Խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

6)Ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

— մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ.

— 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ.

— 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ.

— 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.

բ. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

__Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների նեսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամ.

__ 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ.

__ 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ.

__ 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.

7)Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում << Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի հ ամար.

8)Համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույտվության համար տեղական տուրքը յուրաքնչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. Հիմնական շինությունների ներսում՝

_ մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հինգ հազար մեկ դրամ.

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար մեկ դրամից մինչև տաս հազար մեկ դրամ.

-101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ.

բ. Ոչ հիմնական շինությունների ներսում՝

-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև հազար մեկ դրամ.

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար մեկ դրամից մինչև երկու հազար մեկ դրամ.

9)Մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ.

## Տեղական վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1)Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

2) Ճարտարապետաշինական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

3)Ճարտարապետաշինական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

4)Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

6)Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է << Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

7)Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

8)Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների դիմաց՝ փոխհատուցման գումարի չափով.

9)Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիրակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

---

*ԽԱՆՋՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *Ա. ԱՐՈՅԱՆ*